ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Վանո Լևոնի Ղազազյանի «Ներդրումների արդյունավետության գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ, ներկայացված՝ Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցման համար թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Հետազոտության թեմայի արդիականությունը

Ցանկացած երկրի տնտեսության դինամիկ զարգացման հիմքը ՀՆԱ-ի աճն է: Այս պնդումը հատկանշական է նաև առավել փոքր մասշտաբի պարագայում, օրինակ ձեռնարկության կամ ներդրումային նախագծի շրջանակներում: Տնտեսական շղթայի բոլոր մասնակիցները շահագրգռված են ներքին արդյունքի աճով եկամուտների ավելացման կամ ծախսերի ավելացման բացակայության հաշվին: Արժեքի առավել մեծ աճը հնարավոր է ապահովել է ներդրումային գործունեության իրականացման հաշվին, սակայն նման որոշման ընդունումը և կոնկրետ ներդրման օբյեկտի ընտրությունը պետք է իր հիմքում ունենա հստակ կատարված հաշվարկներ, որոնց արդունքում ներդրողը հնարավորություն կստանա ներդրումային ռեսուրսների նախընտրելի չափի, ուղղության և ժամկետների տեղեկացվածության պայմաններում ընդունել հավասարակշռված որոշում:

Մեծ թվով ուսումնասիրություններ կան և բացահայտվել են բազմաթիվ մեթոդներ կապված այս կամ այն նախագծի արդյունավետության գնահատման հետ, որոնց միջոցով հնարավոր է որոշում կայացնել ներդրման

նպատակահարմարության վերաբերյալ: Սակայն դրանցից ոչ մեկը ունիվերսալ չէ՝ պայմանավորված կոնկրետ ոլորտներում առկա սահմանափակումների և առանձնահատկությունների հետ հետ: Դրանցից յուրաքանչյուրն ունի և իր դրական ու բացասական կողմերը այդ պատճառով էլ մեթոդաբանության ընտրությունը հիմնավորվում է յուրաքանչյուր իրավիճակում առանձնահատուկ կերպով:

Դեռ ավելին գործընթացը բարդանում է անորոշության գործոնների ոչ միանշանակ ազդեցությամբ, որոնք կապված են այն ելակետային կանխատեսվող ցուցանիշների հետ, որոնք ուղղակիորեն ազդում են վերջնական ցուցանիշի վրա, որոնց անտեսումը վերջնարդյունքի օբյեկտիվ սխալ ցուցանիշի կարող է հանգեցնել:

Հենց ներդրումային առավել հիմնավոր որոշման կայացման անհրաժեշտությամբ է պայմանավորված այս ուղղությամբ կատարված հետազոտությունը:

Ճիշտ է գիտական և փորձագիտական շրջանակներում, դժվար է գտնել որևէ հետազոտություն, որը նվիրված կլիներ 2020 թվականի աշխարհի տնտեսական ցուցանիշները պայմանավորող կորոնավիրուսի կամ առհասարակ համաճարակների տարածման հետևանքով ներդրումների ետվերադարձելիության գնահատման մեթոդներին, սակայն այս ուղղությամբ կատարված ցանկացած ուսումնասիրություն էլ ավելի կամրապնդի և չափելի կդարձնի ներդրումային ռեսուրսների օգտագործման վերաբերյալ կայացվող որոշումները:

Հատկապես, եթե ելնենք այն սցենարից, ըստ որի տնտեսական անկմանը հնարավոր է, որ հաջորդի խոշոր տնտեսությամբ երկրների առավել ուժեղ ինքնամեկուսացման քաղաքականությունը, որը թույլ կտա յուրաքանչյուր պետության համախմբելու և կենտրոնացնելու ներքին ռեսուրսները՝ մրցակցության սահմանափակումների պայմաններում:

Համաճարակը հանդես եկավ որպես ձգան հովանավորչական քաղաքականության համար, սակայն նրա հիմքը գլոբալիզացիայի մեծ աճն էր, որի

պատճառով խոշոր տնտեսություններից շատերը որոշ առումներով հայտնվում էին ոչ նպաստավոր դիրքերում:

Այս և այլ պատճառներ հիմք են տալիս պնդելու, որ ներդրումային միջավայրի, ներդրումային արդյունավետության չափման և արդարացված որոշումների կայացման գործում հաշվի առնվող գործոնները և գործընթացը ամբողջությամբ բացահայտված չեն և գտնվում են միջազգային և լոկալ միջավայրերի փոփոխության ազդեցության ներքո՝ ստիպելով վերանայել արդեն իսկ գործող մոտեցումները և առաջարկել նորերը, որոնք թույլ կտան զսպել և առավել ճշգրիտ կանխատեսել ներդրումային մշտապես սուղ ռեսուրսների օգտագործման վերջնարդյունքները:

Հետազոտության նպատակն է հանդիսացել ներկայացնել ՀՀ տնտեսությունում իրականացվող ներդրումների արդյունավետության գնահատման բարելավման ուղիները, որոնք կնպաստեն ներդրումային ծրագրերի հատույցի չափման, տնտեսավարման տարբեր մակարդակներում համախմբման և վերլուծության գործառույթների բարելավմանը և ներդրումների գծով հիմնավոր կառավարչական որոշումների կայացմանը:

Հետազոտության նպատակը և խնդիրները:

Հետազոտության նպատակն է հանդիսացել ներկայացնել ՀՀ տնտեսությունում իրականացվող ներդրումների արդյունավետության գնահատման բարելավման ուղիներ, որոնք կնպաստեն ներդրումային ծրագրերի հատույցի չափման, տնտեսավարման տարբեր մակարդակներում համախմբման և վերլուծության գործառույթների բարելավմանը և ներդրումների գծով հիմնավոր կառավարչական որոշումների կայացմանը:

Ելնելով հետազոտության նպատակից, ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները,

- բացահայտել ՀՀ տնտեսական համակարգում ներդրումների ակտիվությանը խոչընդոտող պատճառահետևանքային կապերը և ներկայացնել առաջարկություններ՝ ներդրումային ծրագրերի իրագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ,
- մշակել ներդրումների արդյունավետության գնահատման ինտեգրալային ցուցանիշ, հիմնվելով ներդրումային ծրագրերին առնչվող շահառուների պահանջմունքների բավարարման փաստացի աստիճանի վրա, և դրանով իսկ հնարավորություն ստեղծել ներդրումների հատույցի վրա ազդող բազմաբնույթ գործոնային վերլուծության համար,
- մշակել ներդրումների ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման արդյունավետության գնահատման ցուցանիշ, հաշվի առնելով ներդրումային ծրագրերի իրագործման ռեսուրսների բազմազանությունը և իրականացնել ներդրումների ֆինանսավորման արդյունավետության փոփոխման գործոնային վերլուծություն՝ բացահայտելով յուրաքանչյուր ռեսուրսային աղբյուրի ազդեցությունը ֆինանսավորման արժեքի փոփոխման վրա:
- մշակել ներդրումների արդյունավետության գնահատման հայեցակարգային դրույթներ, հնարավորություն ընձեռելով համալիր մոտեցմամբ արժևորելու ներդրումային ծրագրերի արդյունքները միկրո և մակրոտնտեսական մակարդակներում, դրանով նպաստելով շահառուների պահանջմունքներին ուղղված կառավարչական որոշումների կայացմանը:

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը և առարկան:

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության կազմակերպություններում իրականացվող ներդրումային գործընթացը, իրեն հատուկ գործառույթների ոլորտով:

Հետազոտության առարկան ներդրումների արդյունավետության գնահատման հայեցակարգային շրջանակն է:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:

Հետազոտության համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել ներդրումային քաղաքականության վերաբերյալ հայրենական և արտասահմանյան հետազոտողների աշխատությունները, գիտական հրատարակումները, աշխատանքային փաստաթղթերը, մակրոտնտեսական վերլուծությունները: Ատենախոսությունում օգտագործվել են ներդրումային գործընթացի զարգացմանը վերաբերող հաշվետվական տվյալներ, ՀՀ վիճակագրական և ուսումնասիրման բնագավառին առնչվող այլ նյութեր:

Հետազոտության մեջ կիրառվել են գիտական աբստրակցիայի, ֆինանսատնտեսական, գործոնային և փորձագիտական վերլուծության մեթոդներ, ինչպես նաև ներդրումային ծրագրերի իրագործման գծով փորձագիտական ուսումնասիրությունների եղանակներ:

Հետազոտության գիտական նորույթը

Հետազոտության գիտական նորույթն է հանդիսացել ներդրումների արդյունավետության գնահատման բարելավումների առաջարկությունների մշակումն ու ներկայացումը հետևյալ ուղղություններով.

- ՀՀ-ում առկա ներդրումային գրավչության աստիճանի գնահատումների հիման վրա բացահայտվել են ներդրումների ակտիվությանը խոչընդոտող պատճառահետևանքային կապերը և դրանց հիման վրա կատարվել են առաջարկություններ՝ ներդրումային ծրագրերի իրագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ,
- մշակվել է ներդրումների արդյունավետության գնահատման ինտեգրալային ցուցանիշ, հիմք ընդունելով ինչպես ներդրումային ծրագրերին առնչվող շահառուների պահանջմունքների բավարարման փաստացի աստիճանը, այնպես էլ ներդրումների հատույցի վրա բազմաբնույթ գործոնների ազդեցությունը,

- մշակվել է ներդրումների ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման արդյունավետության գնահատման ցուցանիշ, որով թիրախավորվում են ներդրումային ծրագրերի իրագործման նպատակահարմար ռեսուրսները և իրականացվում է ներդրումների ֆինանսավորման արդյունավետության փոփոխման գործոնային վերլուծություն՝ բացահայտելով յուրաքանչյուր ռեսուրսային աղբյուրի ազդեցությունը ֆինանսավորման արժեքի փոփոխման վրա:
- մշակվել են ներդրումների արդյունավետության գնահատման հայեցակարգային դրույթներ, որոնք հնարավորություն են ընձեռնում համալիր մոտեցմամբ արժևորելու ներդրումային ծրագրերի արդյունքները միկրո և մակրոտնտեսական մակարդակներում՝ նպաստելով շահառուների պահանջմունքներին ուղղված կառավարչական որոշումների կայացմանը:

Հետազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսությունն իրենից ներկայացնում է ՀՀ կազմակերպություններում վարվող ներդրումային քաղաքականության զարգացման գծով տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված ներդրումային գործընթացի արդյունավետության բարելավման հայեցակարգային ուղիների բացահայտմանը:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ-ում իրականացվող ներդրումային քաղաքականությունում՝ նպաստելով կազմակերպությունների ներդրումային գործառույթների բարելավմանը, ներդրումային ծրագրերի արդյունավետության գնահատմանը, ներդրումների ոլորտում կառավարչական որոշումների բարելավմանը:

Հետազոտության փորձարկումը և հրապարակումները:

Հետազոտության հիմնադրույթների և գիտական արդյունքների շուրջ մի շարք աշխատանքային քննարկումներ են իրականացվել տնտեսագետ-

տեսաբանների, ՀՀ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև կատարված հետազոտության առանձին դրույթներ քննարկվել և արժանացել են հավանության ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում, ՀՈՒՄԿ հիմնադրամի գիտաժողովում (Երևան 2018), Ատենախոսության մեջ քննարկված հարցերն ու հիմնադրույթները իրենց նախնական լուսաբանումն են ստացել հեղինակի 7 գիտական հոդվածներում:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունների բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Այն ընդգրկում է գծապատկեր և 17 աղյուսակ:

Ատենախոսությունը շարադրված է 120 էջի վրա առանց հավելվածների:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, ներկայացվել է գիտական նորույթը, ստացված արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, տեսական և տեղեկատվական հիմքերը, փորձարկումներն ու հրապարակումները, ինչպես նաև ատենախոսության ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Ներդրումային գործընթացի ակտիվությունը ՀՀ տնտեսական համակարգում» գլխում, ներկայացված են ՀՀ տնտեսությունում ներդրումային գործառույթները, բացահայտված են Հայաստանի հանրապետությունում ներդրումային գրավչության ապահովման և ներդրումների օրենսդրական խթանման հիմնախնդիրները:

Ատենախոսության երկրորդ՝ «Ներդրումների արդյունավետության դրսևորման առանձնահատկությունները տնտեսավարման արդի պայմաններում» գլխում, ներկայացված են ներդրումների դասակարգման մոտեցումները տնտեսավարման համատեքստում և ներդրումային ակտիվության դրսևորումները կապիտալի միգրացիայի համատեքստում, պարզաբանված են ներդրումների ֆինանսավորման աղբյուրների արդյունավետ համակցման հիմնախնդիրները:

Ատենախոսության երրորդ՝ «Ներդրումների արդյունավետության գնահատման հայեցակարգային հիմնախնդիրները» գլխում, ներկայացված են ներդրումների արդյունավետության գնահատման մեթոդաբանական մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում, տրված են ներդրումների արդյունավետության չափման և արժևորման բարելավման ուղիները, ինչպես նաև ներդրումների արդյունավետության գնահատման հայեցակարգային շրջանակի բարելավամն ուղիները:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ատենախոսը ներկայացրել է հետազոտությունից բխող առաջարկությունները:

Ընդհանուր առմամբ Վանո Ղազազյանի հետազոտությունն արդիականության տեսակետից ոչ մի կասկած չի հարուցում, սակայն աշխատանքը կշահեր, եթե այնտեղ տեղ չգտնեին ստորև ներկայացվող դիտողությունները.

- Հեղինակի կողմից կատարված եզրահանգումը, ըստ որի օտարերկյա ներդրողների տեսանկյունից շահաբաժինների հարկման փաստը բացասաբար է ազդելու ներդրումային որոշումների կայացման վրա վիճահարույց է, քանի որ ոչ այս ոչ էլ այլ հետազոտություններ և փորձագիտական գնահատականներ չեն վկայում առ այն, որ ներդրումային որոշման վրա ազդող գործոններից առաջնայինը շահութաբաժնի նկատմամբ կիրառվող հարկային դրույքաչափի առկայությունն է: Դեռ ավելին շահաբաժինների չհարկումը, հնարավորություն է տալիս գործատուներին աշխատավարձի թերհայտարարագրման հաշվին և աշխատակիցներին գրանցելով որպես բաժնետերեր ու վերջիններիս կողմից կատարված աշխատանքի վարձատրությունը վճարելով որպես շահաբաժին՝ խուսափել եկամտային հարկ վճարելուց:
- Աշխատանքում տեղ չեն գտել ներկայումս տնտեսական համաշխարհային վիճակը պայմանավորող՝ համաճարակով պայմանավորված գործոնները, որոնք աշխարհի գրեթե բոլոր երկրներում հանգեցնելու են մակրո և միկրո մասշտաբներում իրականացվող ներդրումային քաղաքականության,

ներդրումային գրավչության գործոնների վերանայմանը, տնտեսական անկման հետևանքով բխած նոր հիմնախնդիրների առաջացմանը և վերջիվերջո բնակչության տնտեսական վարքագծի փոփոխությանը:

- Կարծում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե ներդրումային արդյունավետության գնահատման մեթոդաբանության ներկայացվող մոտեցումը հիմնավորված լիներ որոշակի փորձագիտական գնահատման արդյունքներով՝ ուղղված ներդրողների կողմից որոշումների կայացման գործընթացի վրա ազդող գործոնների բացահայտմանը, վերջիններիս որոշակի կշռային դերակատարման լուսաբանմանը, քանի որ ներդրման նպատակահարմարության և արդյունավետության չափմանն ուղղված առաջարկությունները պետք է զսպեն նմանատիպ որոշումներ կայացնողների մտավախությունների արդյունքում առաջացրած ռիսկերը:

Վերը նշված դիտարկումները չեն հանգեցնում աշխատանքում կատարված արդյունքների նսեմացման և կատարված ուսումնասիրությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսության նկատմամբ սահմանված ԲՈԿ-ի պահանջներին:

Վանո Ղազազյանի «Ներդրումների արդյունավետության գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը պատրաստ է հրապարակային պաշտպանության:

Ատենախոսության սեղմագիրը կազմված է պահանջվող չափանիշներին համապատասխան և այն հիմնականում արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթները, գիտական նորույթը և եզրակացությունները: Եզրակացությունները հավաստի են, բխում են ատենախոսական աշխատանքի գիտական նորույթից և հետազոտությունների արդյունքներից:

Կարծում եմ, որ Վանո Լևոնի Ղազազյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ արժանի Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»

մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Վանո Ղազազյանի «Ներդրումների արդյունավետության գնահատման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը պատրաստ է հրապարակային պաշտպանության:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ն.Ս.Բաբայան

Ն.Ս.Բաբայանի ստորագրության իսկությունը հաստատում եմ
«Արդշինբանկ» ՓԲԸ
Անձնակազմի կառավարման վարչության
Կադրային գործավարության բաժնի պետ՝ Ս.Գ.Սարգսյան

30.06.2020թ.